

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐԻ ԵԿԿՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայերը Հայկական լեռնաշխարհում բնակվելիս են ելել վաղնջական ժամանակներից:

Մ.թ.ա. 1410թ. սկսած խեթական տեքստերի տվյալներով Արևմտյան Հայաստանում կազմավորվել է Հայասա պետությունը, որը գոյատևել է մինչև մ.թ.ա. 1165թ. Այն ընդգրկել է Հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Սև ծովի մինչև ընկած տարածքները:

Վաղ միջնադարի հայ պատմիչներին հասած հնագույն տեղեկությունները բաղդատելով խեթական տեքստերի հաղորդումների հետ՝ պարզվել է, որ դա Հայք պետական կազմավորումն է: Հայասա անունը պարունակում է հայ- արմատը, որի վրա խեթերը ավելացրել են իրենց լեզվի -ասա պատկանելություն ցույց տվող ածանցը: Հայասայի անձնանունների և տեղանունների լեզվական ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանք կազմված են հայերենի արմատներից ու ածանցներից:

Հայաստ պետության (հայ. Հայք) կործանվելուց հետո բավական ժամանակ անց, ըստ Մովսես Խորենացուն հասած տեղեկությունների, Արմենակը, որ Հայքի թագավորական տոհմի շառավիղն էր, մոտ մ.թ.ա. 1080թ. հայոց գահը տեղավախում է Արարատյան դաշտ: Այնտեղ նրա հաջորդները մոտ երկու հարյուր տարվա ընթացքում աստիճանաբար հայոց պետականությանը ընդլայնում են՝ լեռնաշխարհի արևելյան հատվածի հայկական գավառները ընդգրկելով մեկ միասնական թագավորության կազմի մեջ:

Մթ.ու. 891թ. Արմավիրում Արամը գահ է բարձրանում: Այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի գավառները կամովին միանում են այդ թագավորությանը: Հայոց արքան, ուժեղացնելով բանակը, հարևան Մարաստանից ետ է գրավում այն գավառները, որոնք մարերը, նախքան նրա արքա դառնալը, խլել էին Հայաստանից: Այնուհետև Արամը գեներալ ուղղում է դեպի հարավ, Կորյուքի միջով հասնում Ասորեստանի դաշտերը:

Այդ ժամանակ աստուրական սեպագիր արձանագրություններում Հայկական լեռնաշխարհը, ի տարբերություն նախորդող ժամանակա-
կուսավածի, հիշատակված է եզակի թվով՝ «Նախդի երկիր» անունով: Դա
Արամի ստեղծած Հայկական թագավորությունն էր, որն ընդգրկում էր
ուղջ լեռնաշխարհը¹:

Այժմ անդրադառնանք ուրարտացիների հետ Արամի ժամանակ հա-
յերի առնչության հարցին:

Ուրարտացիների բնիկ երկիրը՝ Ուրուատրին (տարբ. Ուրատրի, Ու-
րատրու) աստուրական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է մ.թ.ա.
13-րդ դարից: Այն գտնվել է Վանա լճից շատ հարավ՝ Ասորեստանի
սահմանների մոտ՝ արևմուտքից սահմանակցելով Կադմուխի (հայկ.
Կադմեա տուն), հյուսիսից Բոհտան գետի հարավային ավազանի Խաբ-
խի, իսկ արևմուտքից Կուսանի և այլ երկրների հետ²:

Սկսած մ.թ.ա. 890թ. ոչ աստուրական վավերագրերը և ոչ էլ այլ գրա-
վոր աղբյուրներ չեն հիշատակում Ուրուատրին: Մ.թ.ա. 859թ. Ասորես-
տանի թագավոր Սալմանասար 3-րդը Վանի նահանգում իր զորքով
բախվում է Ուրարտու պետության բանակի հետ: Դա նշանակում է, որ
աստուրական արշավանքների պատճառով ուրարտացիներն իրենց բնիկ
երկիր Ուրուատրին լքել էին և տեղափոխվել Վանի նահանգ³:

Սովսես Խորենացին հայոց Արամ թագավորի հարավային արշա-
վանքի կապակցությամբ Կորդուքի առիթով նշում է, որ Ասորեստանն ա-
մայի էր դարձրել այդ տարածքները⁴: Դա ևս հաստատում է այն իրո-
դությունը, որ ուրարտացիները լքել էին Ուրուատրին (հայկ. Կորդուք) և
տեղափոխվել Վանի նահանգ:

Հայ պատմիչն Ուրուատրիի տարածքը հիշատակում է Կորդուք ա-
նունով: Սակայն նույն հեղինակը Հայկ նահապետի Բաբելոնից կարծեց-
յալ գալու կապակցությամբ նույն տարածաշրջանն անվանում է Արա-
րադա երկիր, որը սահմանակից էր Կադմեա տուն (ասսուր. Կադմուխի)
գավառին⁵:

Ի դեպ, «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության մեջ Նոյ նահա-
պետի առնչությամբ հիշատակված է Արաբադ լեռը: Նույնը կրկնվում է
այդ նույն գրավոր հուշարձանի հունարեն օրինակում: Սակայն ասորա-
կան թարգմանության մեջ Արաբադ լեռան անունը փոխարինված է
Քարդու տերմինով: Սովսես Խորենացին այդ տարածաշրջանը մերթ և
կույն է Արաբադ, մերթ՝ Քարդու անունով Կորդուք, իսկ ասորեստանցիներ-
ը՝ Ուրուատրի: Վերջինս Արաբադ անունն է, որը նրանք հարմարեցրել
են իրենց լեզվին ու գրությանը: Ըստ երևույթին Արաբադ անվան մեջ ա-
ռաջին երկու ա ձայնավորները հնչել են օ-ին մոտ տարբերակով: Իսկ
սեպագրերում քանի որ այնտեղ օ գրելու հնարավորություն չկա և այն
վերարտադրել կարող է միայն ու կամ այն պարունակող նշաններով,
այդ անունը ր և դ բաղաձայնների դրափոխությամբ դարձել է Ուրուատ-

րի (հմմտ. Կադմուխի և Կուրմուխի, Արմե և Ուրմե, Քարդու, որից՝ Կոր-
յուք և այլն):

Կարծում ենք. Քսենոֆոնի «Անարասիս» աշխատության մեջ հիշա-
տակված կաղնուխների երկիրը մայն Կորդուքն է Խաբխի, Կումանի,
Կալմուխի և այլ խուռլուսկան գավառների հետ, որի անունը բաղկացած
է կարդու- (հմմտ. Կարդու և Կորդուք) արմատից և ուրարտերենի -խի ա-
ծանցից:

Այն Հերոդոտոսի «Պատմության» մեջ հանդես է գալիս Մատինեա ծ-
ևով, որն. ինչպես հայտնի է, Միտաննի (Խուրբի) անունն է: Հայն պատ-
միչն այդ տարածաշրջանի բնակիչներին կոչել է մատինեներ (այսինքն՝
խուրբիներ):

Անդրադառնալով Արամ թագավորի վերը նշված հարավային արշա-
վանքին, պետք է ենթադրել, որ դրա պատճառներից մեկն էլ, գուցե, ու-
րարտացիների Ուրուստրիից Վանի նահանգ տեղավաժվելն էր, որը
բնականաբար պետք է անհանգստացներ հայոց արքային:

Ուրարտացիները, բնակություն հաստատելով Վանի նահանգում,
մ.թ.ա. 860թ, ստեղծում են պետություն, որը հասկանալի պատճառներով
Հայաստանի և Ատրեստանի համար ծեղմտու չէր: Դրա համար էլ վեր-
ջիններս հենց այդ ժամանակվանից դաշնակցում են իրար հետ՝ զենքն
ուսլելով Ուրարտուի դեմ⁶:

Մ.թ.ա. 810թ. Ատրեստանում Շամշի-Ադադ 5-րդ արքայի մահից հե-
տո երկրի գահը ժառանգում է նրա դեռահաս որդի Ադադներարի 3-րդը,
որի փոխարեն մ.թ.ա. 810-806թ. երկիրը ղեկավարում է նրա մայր Շամ-
մուրսամաթը (Շամիրամ):

Նշված թվականներին, ի տարբերություն դրանց նախորդի և հաջոր-
դի ժամանակաշրջանների, Ատրեստանի և Ուրարտուի միջև ոչ մի
ռազմական ընդհարման կամ թշնամական հարաբերությունների մասին
սեպագիր աղբյուրներում որևէ փաստ չի հիշատակվում:

Մովսես Խորենացուն հասած հաղորդումների համաձայն Շամիրամ
թագունին որպես ամառանոց ընտրել էր Վանը և այնտեղ մի շարք կա-
ռույցներ էր կյանքի կոչել, ինչպես նաև այն հայտնի ջրանցքը, որը հայ
պատմիչը նրա անունով է հիշատակում⁷:

Մինչդեռ ուրարտական սեպագիր աղբյուրների հաղորդումներից և
դրանց հիման վրա մասնագետների կատարած ուսումնասիրություննե-
րից պարզ է դարձել, որ մ.թ.ա. 810թ. Վանում Իշպուլինի թագավորից հե-
տո գահը ժառանգած նրա որդի Մենուան կառուցել է մի շարք շինու-
թյուններ, որոնց թվում՝ Վանի ջրանցքը, որը նա կոչել է իր անունով:

Այդուհանդերձ, կարծում ենք, հայ պատմիչին հասած նշված հաղոր-
դումները չեն հակասում ուրարտական սեպագիր աղբյուրների վկայու-
թյուններին, այլ դրանք լրացնում են միմյանց: Այդ ժամանակ ասսուրա-
ուրարտական փոխհարաբերությունները շատ լավ էին: Շամմուրսամաթ

թագուհին հյուրընկալվել է Վանում: Նա բազմակողմանի օգնությամբ է ցույց ավել Մեմուային, ինչպես այլ շինությունների, այնպես էլ ջրանցքի կառուցման գործերում: Ուրարտուի թագավորի համար դա շատ ձեռն-տու համագործակցություն պետք է լիներ, քանի որ նա դրանցով Վանի թագավորության հզորության հիմքերն է դրել:

Դրա համար էլ Վանի ջրանցքը տարբեր վավերագրերում կարող էր հանդես գալ մերթ Շամիրամի, մերթ էի Մեմուայի անունով:

Շամիրամ թագուհու նշված վարքագիծը բնականաբար պետք է շատ վատ ընդունվեր Ասորեստանի արքունիքում: Այդ պատճառով էլ Ադադ-ներսարի 3-րդը, որն արդեն մ.թ.ա. 806թ. հասունացած էր երկիրը ղեկավարելու համար, Սովսես Խորենացու տվյալների համաձայն, որին նա զիտեր՝ Նինվաս անունով, իր գորախմբով գալիս է Վան ե սպանում իր մորը՝ Շամիրամին⁸:

Մինչև մ.թ.ա. 810թ. ուրարտական թագավորներն արդեն նվաճել էին Արամի ստեղծած Հայկական թագավորության արևմտյան զավառներն ու նահանգները: Այն մնացել էր ամփոփված լեռնաշխարհի արևելյան շրջանների սահմաններում, որի մայրաքաղաքն է Արմավիրը:

Այժմ անդրադառնալով մեկ այլ հարցի: Ինչպես պարզվել է, նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը բնակեցված էր հայերով, որը հաստատվում է ոչ միայն մ.թ.ա. 9-7-րդ դդ իրադարձությունների մասին Սովսես Խորենացուն հասած տվյալների բաղդատությամբ ուրարտական սեպագիր աղբյուրների հաղորդումների հետ, այլ նաև տարածաշրջանի տեղանունների ուսումնասիրությամբ, որոնք կազմված են հայերենի հնդեվրոպական արմատներից ու ածանցներից:

Այդ բոլորը, կարծում ենք, հիմնավորվում է նաև ուրարտական թագավորների Հայաստանում թողած սեպագիր արձանագրությունների այլ կարգի տվյալներով: Դրանց ճնշող մասի վերջում նրանք գետեղել են անեծքի բանաձև, որով սպառնում են կոթողը ջարդողներին այլ կարգի տվյալներով: Դրանց ճնշող մասի վերջում նրանք գետեղել են անեծքի բանաձև, որով սպառնում են կոթողը ջարդողներին աստվածների պատիժներով:

Քանի որ տեղի բնակչությունը ուրարտական արքաների համար օտար էր, նրանք միշտ վախեցել են, որ իրենց թուլած զրավոր հուշարձանները կարող են վերացվել: Ի տարբերություն ուրարտացիների, Ասորեստանի և Խեթական պետության տիրակալները իրենց երկրներում թողած արձանագրությունների վերջում չեն գետեղել անեծքի բանաձև, որովհետև սեփական ժողովուրդը դրանք չէր կարող ոչնչացնել:

Ի դեպ, ուրարտական սեպագիր հուշարձանների փոքր մասն է, որտեղ այդպիսի բանաձև չկա: Օրինակ՝ Վանի կթողները, որտեղ ուրարտացիներ էին բնակվում, կամ Արին-բերդի և այլ ամրոցների քարե կոթողները, որտեղ գետեղված մշտական էին կայագործներ:

Այժմ անդրադառնանք Վանի ջրանցքի վերը նշված երկու անուններիին առնչվող մեկ հարցի:

Մովսես Խոբեմացուն հասած հնագույն հաղորդումների համաձայն այդ ջրանցքը կառուցել է Ասորեստանի թագուհի Շամիրամը, և պատմիչը իրս կոչում է նրա անունով:

Իսկ ուրարտական սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ այն կյանքի է կոչել Մեմուան: Այսպես, Կատեպանց բնակավայրում ջրանցքի հունին մոտ նշված տիրակալը թողել է մի վավերագիր, որտեղ գրված է. «Խալդի աստծո գորությամբ Մեմուան՝ Իշպուինիի որդին, այս ջրանցքը անց կացրեց: Անունը Մեմուայի ջրանցք է»: Սի քանի տող հետո կարդում ենք. «Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջուրդի, ով որևէ մեկին այս (գործերը) վերագրի, ով որիշ բան ասի՝ ես այս ջրանցքը անց կացրի, թող (նրան) ոչնչացնեն Խալդին, Թեյշեբան, Շիվինին, բոլոր աստվածները»¹⁰:

Կարելի է ենթադրել, որ տեղի հայ բնակչությունը դեռևս այդ ժամանակ գերադասել է կոչել յորա կառուցման գործում Վանի թագավորին մեծ օգնություն ցուցաբերած իրեն թշնամի Շամիրամի և ոչ Հայաստանը նվաճած օտար բռնակալ Մեմուայի անունով, ի հեճուկս վերջինի: Դրա համար էլ Մեմուան ստիպված է եղել հատուկ նշելու, որ ով ուրիշին վերագրի այդ գործը, թող աստվածները նրան ոչնչացնեն:

Ավելին, Վանի արքաները սովորաբար ամեն մի ամրոց կամ շինություն կառուցելիս թողել են մեկ արձանագրություն: Բացառություն է կազմում Լրեբունին, որի մասին մի քանի գրավոր կոթող է հասել մեզ: Սակայն Մեմուան Վանի ջրանցքի անց կացման մասին գրել է տվել 11 արձանագրություն՝ յուրանցում նշելով, որ այն իր անունով է կոչվում¹¹:

Բերկրիի վավերագրում մա մորից նշում է. թե ով այս գործը ուրիշին վերագրի, թող աստվածները նրան ոչնչացնեն: Նույնը կրկնվում է Մարմոսի գրավոր աղբյուրի մեջ¹²:

Այս բոլորը հաստատում են, որ տեղի հայ բնակչությունը ջրանցքի կառուցումից հետո այն մախսապատվություն է համարել կոչել իր համար ոչ բարեկամ Շամիրամի և ոչ երկիրը նվաճած օտար բռնակալ Մեմուայի անունով:

Այժմ համառոտակի անդրադառնանք ուրարտերեն լեզվի վրա հայերենի թույած ազդեցության մի քանի հարցերի քննությանը:

Ռուսու 1-ինի (մ.թ.ա. 735-713թթ.) Սևանի ավազանի Ծովինարի սեպագիր արձանագրության մեջ կարդում ենք.

«Խալդի աստծո՝ տիրոջ գորությամբ Ռուսան՝ Սարդուրիի որդին՝ ես այս երկրները մեկ արշավանքի ընթացքում գրավեցի, դարձրի ստրուկ՝ Ադախտուի երկիրը, Ուեիկուխի երկիրը, Լուեբուխի երկիրը, Արքուքինի երկիրը՝ չորս թագավորների ծովի այս կողմից (4 LUGAL¹³ inani aptini

šainiani), Գուրքումելի երկիրը..., 19 թագավորների ծովի այն կողմի բարձր լեռներում (19 LUGAL^{MEŠ} išanī aptinī šainiani)»¹³:

Ինչպես մասնագետները պարզել են, ծովինի-ն հայ. ծով բառն է, ապ-տինի-ն նույն լեզվի ափ արմատն է՝ ուրարտերենի տինի «ամուն» բա-ղադրիչով: Ինանի-ն թարգմանվում է «այս»-ն իսկ իշանի-ն՝ «այն (կողմ)» իմաստներով¹⁴:

Կարծում ենք, որ դեանք Սուշի բարբառի ինա «այն» և իսա «այս» ցուցական դերանուններն են, որոնք ուրարտացի գրիչն օգտագործել է հուկատակ ընկադումով:

Այսպիսով, պուրզվում է, որ վերյո նշված բառակապակցություններում արմատները հայերեն են, իսկ վերջավորությունները՝ ուրարտերենի քե-րականական մասնիկներ:

Կամ, Վանի ջրանցքի կառուցման կապակցությամբ Մենուայի Կա-տեպանց գյուղի արձանագրության մեջ առկա է հետևյալ արտահայ-տությունը՝ iēse inī pili agubi «ես այս ջրանցքը կառուցեցի»¹⁵: Այն կրկնվում է Արտամետի, Մժնկերտի, Բերկբիի նրա թողած վավերագրե-րում¹⁶:

Կարծում ենք, իեշե-ն «ես» Սուշի բարբառի իես «ես» անձնական դե-րանունն է, իսկ ինի-ն նույն բարբառի ինա «այն» ցուցականը: Պիլի և ա-գու-րի արմատները հետազոտողները նույնացնում են հայերենի համա-պատասխան պեղ-ել «վաղել» և ագ-ուցել «հագցնել» բառերի հետ¹⁷:

Չնայած նման բառակապակցությունները շատ չեն ուրարտերենում, սակայն բերված օրինակները վկայում են ուրարտերենի վրա հայերենի թողած խիստ ազդեցության մասին: Ավելին, հայերենից անձնական և ցուցական դերանունների ուրարտական լեզվում ներթափանցելը, որը հազվադեպ է պատահում, ցույց են տալիս, որ տեղի հայերի լեզուն շատ մեծ հետևանքներ է թողել եկվորների խոսակցական և գրավոր բառա-պաշարում:

Վերը բերված որոշ փաստեր նաև վկայում են, որ դեռևս ուրարտացի-ների ժամանակ հայերենում բարբառային տարբերակումներ են եղել:

Ուրարտացիների եկվոր լինելու մասին է վկայում ևս մեկ այլ փաստ: Արգիշտի 1-ինը (մ.թ.ա. 786-764թթ.) մ.թ.ա. 782թ. հայոց Անուշավան տի-րակալի օրոք նվաճում է Էտիունին՝ Այրարատը և վերջ դնում հայկական թագավորությանը: Ավերելով Արմավիր մայրաքաղաքը՝ դրա տեղում կառուցում է նոր բերդ և իր ամունով կոչում Արգիշտիխինիլի:

Երևան բնակավայրի մոտ մեկ կյանքի է կոչում մի ամբողջ և անվանում էրիբունի (այժմ Արիմբերդ): Տեղում հայտնաբերված այդ արքայի վավե-րագրում կարդում ենք.

«Խաղի աստծու մեծությամբ Արգիշտին՝ Սենուայի որդին, այս փառավոր ամրոցը կառուցեց, անունը դրեց Էր(ե)բուրնին: Բիայնիլի երկրին (թուլ լինի) հզորություն, թշնամի (երկրներին)՝ հնազանդություն»¹⁹:

Այս տեքստը կրկնվում է նշված թագավորի թողած մի քանի այլ գրավոր հուշարձաններում:

Նախ, ակնառու է, որ ուրարտական թագավորը նվաճել է թշնամի երկիր: Դա Էտիուրնին է՝ Այրարատը: Բերդը կառուցելով՝ նա ձգտել է այդ օտար երկիրը հնազանդ պահել:

Ինչպես ժամանակին նկատել են մի շարք մասնագետներ, հայկական տեղանունների վ բաղաձայնը ուրարտերենում հաճախ հնչել է բ: Իսկ Երևան տեղանվան ա ձայնավորը, կարծում ենք, օ-ին մոտ արտասանություն է ունեցել. դրա համար էլ սեպագիր տեքստերում այն դարձել է ու, քանի որ, ինչպես վերը նշվեց, այդ գործյան մեջ օ արտահայտելու հնարավորություն չկա: Ավելին, սեպագրերը եւ է ձայնավորներ տարբերակելու հնարավորություն չուներ: Արդյունքում Երևանը դարձել է Էրեբուրնի, բայց ոչ հակառակը:

Ի դեպ, Երևան անունը կազմված է հայ. երեվ-ալ բայախմբից և -ան ածանցից, որ առկա է միջմադարի շատ այլ տեղանունների մեջ (հմմտ. Երևան՝ մեմաստան Արաբկիրի գավառում, Երևան՝ գյուղ Էրզրումում, Երևան՝ դաշտ Վանանքում, մոտ Երևիլ ձևով և այլն):

Էախուրնին՝ Այրարատը նվաճելուց մի քանի տարի անց Արգիշտին իր տարեգրության մեջ նշում է. «Արգիշտին ասում է՝ լսեցի, (որ) Էտիուրնիականը Արդինի քաղաքի աշտիուծի-ն irbilani: Նույն տարում նորից (») զինվորներ հավաքեցի...: Արշավանքի գնացի դեպի Էտիուրնի երկիր, նվաճեցի Էրիախի երկիրը, Կատարգա երկիրը, հասա մինչև Իշկիզուր երկիրը ...»²⁰:

Գ.Ա. Մելիքիշվիլին աշտիուծի-ն համարում է հայ. աստված բառի նախատիպ (հմմտ. բարբ. աստուծ)²⁰:

Նա իրբիլուսնի բառաձևը կապում է ուրարտ. irb(u)-«ստևանգել» բայարմատի հետ: Դրանում -նի մասնիկը ուրարտ. բայի անցյալ ժամանակի երրորդ դեմքի ցուցիչն է: Այդ դեմքին է վերաբերում նաև -լ(ի)- բաղադրիչը: Այդուհանդերձ այդ բայաձևը մնում է որոշ չափով անընկալելի: Սակայն եթե մենք հետևենք վերը բերված տեքստի բովանդակությանը և վերը նշված մեկնաբանություններին, այն, կարծում ենք, հնարավոր է մեկնաբանել հետևյալ ձևով:

Արգիշտին, լսելով, որ ում Էտիուրնի Արդինի քաղաքի աստիուծիի արձանը հափշտակել է, դրա համար նա մույն տարում ձեռնարկում է արշավանք դեպի Էտիուրնի երկիրը այն ետ խլելու նպատակով: Սակայն, ինչպես տեքստն է վկայում, դա նրան չի հաջողվում:

Կարելի է ենթադրել, որ Արգիշտին նախքան այդ իրողությունը, նվաճելով Էտիուրնի երկիրը, այնտեղից հայերի զխավոր աստծու արձանը,

որին մասնաշաղկապում է աշտիտի ձևով, առանցքել է և տաքել ուրարտական կրոնական կենտրոն Արդինի քաղաքը: Մակայն մի քանի տարի անց ոմն էտիունցի՝ այրարատցի, գնում, զոդանում է այդ արձանն ու տանում էտիանի:

Ի դեպ, հնագիտական քննարկում երկրի գլխավոր աստծու արձանը առանցքելով նվաճողը աշխատում է զրկել դրանով դիմացիններին նրանց իսկ աստծու օժանդակությունից:

Վերը բերված բոլոր փաստերը նույնպես հաստատում են, որ ուրարտացիները դրսից էին ներթափանցել Հայաստան ու Վանի մահաճուրմ ստեղծել պետություն:

VALERY KHACHATRYAN

NEW FACTS ABOUT THE UNTRUSIVE CHARACTER OF THE URARTIANS

In the article several facts about the untrusive character of the Urartians are given. These are –the existence of Armenian words in the Urartian language, the name of Van Canal – Shamiram, given by the Armenians still in the time of the reign of Menua, the fact of the abduction of the Armenians' supreme god's statue by the Urartian King Argishti I and its re-abduction from the city of Ardini by the Etiunians etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Ն. Խաչատրյան, «Հայաստանը մ.թ.ա. 15-7-րդ դդ», Երևան, 1998, էջ 22-26, 34-46: Տես նաև «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXI, Երևան, 2003թ., էջ 173-183:
2. Н.В. Арутюнян, "Бийниги", Ереван, 1970, стр. 12-21.
3. Վ.Ն. Խաչատրյան, նույնի, էջ 119:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, Ժդ:
5. Նույնի I, Ժ:
6. Վ.Ն. Խաչատրյան, նույնի, էջ 110-111:
7. Մովսես Խորենացի, նույնի, I, Ժգ:
8. Մովսես Խորենացի, նույնի, I, Ժէ:
9. Н.В. Арутюнян, "Бийниги", стр. 119-279.
10. Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (= КУКН), Ереван, 2001, 60, стк. 1-3 и стк. 7-11.
11. Н.В. Арутюнян, КУКН, 63, 64, 74.
12. Н.В. Арутюнян, КУКН, 78.
13. Н.В. Арутюнян, КУКН, 389, стк. 1-13.
14. Н.В. Арутюнян, КУКН, стр. 448 и 450.
15. Н.В. Арутюнян, КУКН, 60, стк. 10.
16. Н.В. Арутюнян, КУКН, 61, 62, 64.

17. Н.В. Арутюнян, КУКН, стр. 458.
18. Н.В. Арутюнян, КУКН, 197, 198.
19. Н.В. Арутюнян, КУКН, 17,3, V, стк. 41-49.
20. Г.А. Меликишвили, "Переднеазиатский сборник", III, Москва, 1979, стр. 171-176.